# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1082

## ԱՐԱՄԱՅԻՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԵՐՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի Ռոբերտ Շահինյանի դիմումի հիման վրա ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 11.05.2020թ. կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Արամայիս Կարապետի Սերոբյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 11.05.2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Արամայիս Սերոբյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց թիվ 98/20) Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 98/20 բազմաբնակարան շենքի 1-ին հարկի արևմտյան մասում ինքնակամ կառուցել է պատշգամբ:

2020 թվականի մայիսի 11-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի մայիսի 22-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել էին Արամայիս Սերոբյանը և Ռոբերտ Շահինյանը: Վարչական վարույթի լսումներին ներկայացել էր Արամայիս Կարապետի Սերոբյանը:
20.05.2020 թվականին Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմին ներկայացվել է թիվ 067/2307 հեռագիրը՝ Արամայիս Սերոբյանի կողմից կատարված ինքնակամ կառույցի վերաբերյալ 22.05.2020 թվականի վարչական վարույթի լսումներին մասնակցելու հնարավորություն չունենալու պատճառով դիրքորոշում հայտնելու մասին, որի համաձայն նշված ինքնակամ կառույցը ենթակա է քանդման, քանի որ այն քաղաքացուն զրկել է Վարդանանց փողոցի 98/23 բնակարանը բնականոն շահագործելու հնարավորությունից և իրավունքից: Նույն կառույցի համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո Արամայիս Սերոբյանը շարունակել է անօրինական շինարարությունը:

Վերոնշյալ հեռագրի հասցեատերը հայտնի չէ, բացի այդ քաղաքացու կողմից վարչական մարմնին չի ներկայացվել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 98/23 հասցեի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև վարչական մարմնին չի ներկայացվել տեղեկություն այն մասին, թե իր ո՞ր իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերն են խախտվել:

22.05.2020 թվականին կազմված արձանագրության համաձայն Արամայիս Սերոբյանը հայտնեց, որ իրեն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակարանի պատշգամբում կատարել է վերանորոգման աշխատանքներ և չի խախտել որևէ մեկի իրավունքները:
Արամայիս Սերոբյանը վարչական մարմնին ներկայացրեց նաև համապատասխան լուսանկար, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականատերերի կողմից տրված լիազորագիր:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 98/20 բազմաբնակարան շենքի 1-ին հարկի արևմտյան մասում կառուցված պատշգամբը Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 09 նոյեմբերի 2015 թվականի թիվ 1758-Ա որոշմամբ օրինականացվել է Արամայիս, Կարապետ, Մարլենա Սերոբյանների և Անուշ Մարգարյանի անվամբ, որի հիման վրա տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30112015-06-0024 վկայականը:
Արամայիս Սերոբյանի կողմից պատշգամբի վերին հատվածում կատարվել է ներքին հարդարման աշխատանք՝ քամու փոշու աղտոտումից խուսափելու նպատակով:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման թիվ 4 հավելվածի համաձայն շինարարության թույլտվություն չի պահանջվում ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքների համար, իսկ Արամայիս Սերոբյանի կողմից կատարված արարքը համարվում է ներքին հարդարում, որը վարչական իրավախախտում չի համարվում և վարչական պատասխանատվություն չի առաջացնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. 11.05.2020 թվականին Արամայիս Կարապետի Սերոբյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1083

## ՄՀԵՐ ՍԱՆԱՍԱՐԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի կողմից ներկայացված
ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի կողմից ներկայացված գրության համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 12.05.2020 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Մհեր Սանասարի Եղիազարյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 12.05.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Միհր Սանասարի Եղիազարյանը (հասցե՝ ք. Վանաձոր,Կ. Դեմիրճյան փող. 62, 32) ինքնակամ ապամոնտաժել է Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պող. թիվ 12 բազմաբնակարան շենքի հյուսիսային մասում գտնվող սիզամարգը և հարակից բազալտե եզրաքարերը:

2020 թվականի մայիսի 12-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի մայիսի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել և չէր ներկայացել Միհր Սանասարի Եղիազարյանը: Փոստային կտրոնը ետ է վերադարձել «տեղափոխված» նշումով:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի

ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Միեր Սանասարի Եղիազարյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1084

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 19 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՐԼԵՆԻ ՍՈԽԻԿՅԱՆԻ, ՓԻՐՈՒԶ ՄԱԹԵՎՈՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ԿԱՐԼԵՆԻ ՍՈԽԻԿՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԿԱՐԼԵՆԻ ՍՈԽԻԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Կարլենի Սոխիկյանի (ծնված՝ 28.02.1958թ.), ով հանդիսանում է նաև Ռուզաննա Կարլենի Սոխիկյանի (ծնված՝ 25.11.1959թ.) լիազորված անձը, Փիրուզ Մաթևոսի Դանիելյանի (ծնված՝ 12.08.1931թ.) և Արմեն Կարլենի Սոխիկյանի (ծնված՝ 22.11.1963թ.) լիազորված անձ Անահիտ Բենիկի Հանիսյանի (ծնված՝ 03.01.1957թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 14.01.1997թ. սեփականության վկայագիրը, 23.08.2019թ. տրված թիվ 682 (նոտարական ակտի կոդ: 775-20200313-64-4515979) և 16.07.2019թ. տրված թիվ 2082 (նոտարական ակտի կոդ: 843-20190711-64-4004439) լիազորագրերը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 19 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 801.0քմ և կից 399.5քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960-1982թ.թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1200.5քմ: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սուսաննա Կարլենի Սոխիկյանի (1/4), Փիրուզ Մաթևոսի Դանիելյանի (1/4), Ռուզաննա Կարլենի Սոխիկյանի (1/4) և Արմեն Կարլենի Սոխիկյանի (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 19 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 801.0քմ մակերեսով հողամասին կից 399.5քմ մակարեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Սուսաննա Կարլենի Սոխիկյանի (1/4), Փիրուզ Մաթևոսի Դանիելյանի (1/4), Ռուզաննա Կարլենի Սոխիկյանի (1/4) և Արմեն Կարլենի Սոխիկյանի (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 19 հասցեի 1200.5քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Խնձորուտ, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 19 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
Ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1085

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԼԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԼՈՌՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալիկ Ալբերտի Լոռյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20112017-06-0027 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 14 հասցեում գտնվող Ալիկ Ալբերտի Լոռյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բանակի փողոց, թիվ 14-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1086

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ, ԹԻՎ 44 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 44 շենքի հարավարևմտյան մասում գտնվող 0,00198հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 42-27/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1087

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 987 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21/05/2020թ. թիվ Կ-21052020-06-0052 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 06 մայիսի 2020 թվականի թիվ 987 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 մայիսի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց, թիվ 10/2 հասցեին կից գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու եվ փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 987 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում «10/2-1» թվերը փոխարինել «10/2-7/4» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1088

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ 19-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՍԵՆ ՍՈՒՐԻԿԻ ՋՈՒՐԱԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Սուրիկի Ջուրաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13052020-06-0023 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի ա) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տավրոս 19-րդ փողոց թիվ 30/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 10.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.78քմ) բնակելի տունը 51510 (հիսունմեկ հազար հինգ հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 10.1քմ մակերեսով հողամասը 19340 (տասնինը հազար երեք հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արսեն Սուրիկի Ջուրաբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արսեն Ջուրաբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակելի տան և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1089

## ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՓԵՏՐՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 76 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՔԿԱԳ Վանաձոր տարածքային բաժնի կողմից 09.12.2013թ. Միշա Վարդան Վիրաբյանին տրված թիվ ԱԲ 141221 մահվան վկայականը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1945307 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 04 փետրվարի 2010 թվականի «Միշա Վիրաբյանի կողմից Վարդանանց փողոցի թիվ 36/25 հասցեում ինքնակամ կառուցված, Վանաձորի համայնքային սեփականություն ճանաչված ավտոտնակը և հողամասը տրամադրելու մասին» թիվ 76 որոշումը՝ 10.02.2010թ. ավտոտնակի վարձակալության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 33 պայմանագիրը համարելով լուծված:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Վարդանանց փող թիվ 36/25 հասցեում գտնվող հողամասի վարձավճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1090

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6-18/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՌՆԻԿ ՌԱՖԻԿԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնիկ Ռաֆիկի Սաղաթելյանի դիմումը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14102019-06-0047 և Լեռնիկ Ռաֆիկի Սաղաթելյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26022020-06-0020 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 6-18/1 հասցեում գտնվող, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.0քմ մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 90480 (իննսուն հազար չորս հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լեռնիկ Ռաֆիկի Սաղաթելյանին՝ հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Լեռնիկ Ռաֆիկի Սաղաթելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1091

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 6 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՏՆԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գրիբոյեդովի փողոց, թիվ 6 շենքի հարևանությամբ գտնվող տնակին տրամադրել ժամանակավոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Գրիբոյեդովի փողոց, թիվ 6/61-1 տնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1092

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՐԵԳԻՆ ԿԻՐԱԿՈՍԻ ՓԱՐՉԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գարեգին Կիրակոսի Փարչամյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0041 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի բ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոց թիվ 29-1/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 32.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 28.65քմ) խանութը 604800 (վեց հարյուր չորս հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 38.8քմ մակերեսով հողամասը 114080 (հարյուր տասնչորս հազար ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գարեգին Կիրակոսի Փարչամյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գարեգին Կիրակոսի Փարչամյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել խանութի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1093

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11-66/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԵՎՇԱՏ ՌՈԲԵՐՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արևշատ Ռոբերտի Հովսեփյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0030 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 11-66/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 35.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 32.52քմ) ավտոտնակը 92040 (իննսուներկու հազար քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 35.4քմ մակերեսով հողամասը 160150 (հարյուր վաթսուն հազար հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արևշատ Ռոբերտի Հովսեփյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արևշատ Հովսեփյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1094

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 101/1-39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՍՈՒՆ ԺՈՐԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սասուն Ժորայի Գալստյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26032020-06-0065 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

Փոխել Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փողոց 101/1-39 հասցեում գտնվող 0,0021հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1095

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 2-2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 07.05.2020թ. թիվ Կ-07052020-06-0140 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

Փոխել Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 2-2/3 հասցեում գտնվող 0.00198հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1096

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49-2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՂԱՎԱՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՐՅՈԺԱ ԱԹԱՆԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Աթանեսի Մարտիրոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0036 և Սերյոժա Աթանեսի Մարտիրոսյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07052018-06-0025 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 49-2/2 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 23.7 քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0036 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 107220 (հարյուր յոթ հազար երկու հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սերյոժա Աթանեսի Մարտիրոսյանին՝ տաղավարի ընդլայնման նպատակով:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սերյոժա Աթանեսի Մարտիրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 23.7 քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1097

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԳԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/6 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԼԵՏ ԱՐՄԵՆԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 26 ԱՊՐԻԼԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 799 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Արմենակի Հովհաննիսյանի (ծնված՝ 26.01.1947թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Բաժանորդի էպիկրիզը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-16/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված տեղեկանքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լագերի փողոցի թիվ 8/6 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 117.10քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1988-1995թ.թ.թ.-ին, դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 117.10քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է 1988թ.-ից սկսած:Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Համլետ Արմենակի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Լագերի փողոցի թիվ 8/6 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 117.10քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Լագերի փողոցի թիվ 8/6 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Լագերի փողոց, թիվ 8/6-1 բնակելի տուն:
4. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 26 ապրիլի 2005 թվականի «Ինքնակամ շինության և հողամասի նկատմամբ Համլետ Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 799 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1098

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ, ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԻՎ 47 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Հարությունի Ղազարյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 47 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 20.52քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.7քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 47.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 47 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 47/12-1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1099

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ ՋԵՅԹՈՒՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԽԱՆՈՒԹԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՄԱԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմաիս Մարտիրոսի Մանուչարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0044 և Արմաիս Մարտիրոսի Մանուչարյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06122019-06-0048 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս Ջեյթունի փողոց թիվ 5/1-1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 60.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0044 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 114840 (հարյուր տասնչորս հազար ութ հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմաիս Մարտիրոսի Մանուչարյանին՝ խանութի ընդլայնման նպատակով:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմաիս Մանուչարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 60.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1100

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԴԻՄԱՑ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 15Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՋԵՄՖԵՐԻԴԱ ԳԵՎՈՐԳԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջեմֆերիդա Գևորգի Հովհաննիսյանի (ծնված՝ 30.05.1952թ.) դիմումը, 07.05.1986թ. անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, 18.11.2019թ. սեփականության իրավունքի թիվ 6423 (նոտարական ակտի կոդ: 594-20191118-84-4312831) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6424 (նոտարական ակտի կոդ: 594-20191118-84-4312270) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-231/19 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Դիմաց 1-ին փողոց 15ա հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 34.0քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 34.0քմ, որը զբաղեցվել է մինչև 1986 թվականը: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ջեմֆերիդա Գևորգի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Դիմաց 1-ին փողոց 15ա հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 34.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Իսրայել Օրու փողոց, թիվ 15/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1101

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ, ՔՇՀ-7, ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-7, թիվ 7 շենքի արևմտյան մասում գտնվող 0,0168հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-7, թիվ 7-1/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1102

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂ ԹԻՎ 26Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌՈՒԲԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբեն Գուրգենի Հովհաննիսյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1944584 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բաթումի փող թիվ 26ա հասցեում գտնվող Ռուբեն Գուրգենի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բաթումի փողոց, թիվ 26-1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
Ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1103

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 11-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21/05/2020թ. թիվ Կ-21052020-06-0076 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

Փոխել Վանաձոր քաղաքի Պռոշյան փողոց, թիվ 11-1/1 հասցեում գտնվող 0.01315հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1104

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 23 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մայիսի 2020 թվականի թիվ 23 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մայիսի 2020 թվականի թիվ 23 ավարտական ակտում (շահագործման թույլտվություն) կատարել հետևյալ փոփոխությունը՝ 4-րդ կետում «աստիճանահարթակ-99.63քմ» բառերը փոխարինել «աստիճանահարթակ-4.98քմ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

01 հունիսի 2020 թվականի N 1105

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու հարավային մասում գտնվող 0,00900հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Երևանյան խճուղի, թիվ 84/4-4/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1106

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2020 թվականի N 1107

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 1089/450 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաթևիկ Արարատի Իսրայելյանի դիմումը և անձնագիրը, Լարիսա Հայկի Իսրաելյանի անձնագիրը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 75Ա շենքի թիվ 25 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 29-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 1089/450 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման նախաբանում «Լարիսա Հայկի Իսրայելյանը» բառերը փոխարինել «Լարիսա Հայկի Իսրաելյանը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Իսրայելյան Լարիսա Հ.» և «Իսրայելյան Տաթևիկ Ա.» բառերը փոխարինել «Իսրաելյան Լարիսա Հայկի» և «Իսրայելյան Տաթևիկ Արարատի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 հունիսի 2020 թվականի N 1108

## ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 126/101 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարկարիտ Անդրանիկի Նավոյանի լիազորված անձ Մելանյա Կորյունի Մարուխյանի դիմումը, Մարկարիտ Անդրանիկի Նավոյանի անձնագիրը և 07.05.2020 թվականին տրված թիվ 50АБ 2754480 լիազորագիրը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Չուխաջյան կվ. փողոցի 11 շենքի թիվ 49 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի փետրվարի 23-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 126/101 որոշման 1-ին կետի աղյուսակում կատարել հետևյալ ուղղումը՝ «Մարգարիտ» բառը փոխարինել «Մարկարիտ» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2020 թվականի N 1109

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/6-6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԱՄ ՀԵՆՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Հենրիկի Պողոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0034 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի բ) ենթակետով, 33.2-րդ, 34-րդ կետերով, 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 2/6-6 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 5.35քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 4.58քմ) օժանդակ շինությունը 125190 (հարյուր քսանհինգ հազար հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 53.2քմ մակերեսով հողամասը, որից 10.7քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 48410 (քառասունութ հազար չորս հարյուր տասը) դրամով, իսկ 42.5քմ (53.2քմ-10.7քմ) մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 576810 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արամ Հենրիկի Պողոսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արամ Պողոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել օժանդակ շինության և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2020 թվականի N 1110

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62/1-41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՆՈՒԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանուկ Հովհաննեսի Նալբանդյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052020-06-0016 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոց թիվ 62/1-41 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.6քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.62քմ) ավտոտնակը 41820 (քառասունմեկ հազար ութ հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 24.6քմ մակերեսով հողամասը 47090 (քառասունյոթ հազար իննսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մանուկ Հովհաննեսի Նալբանդյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Մանուկ Նալբանդյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2020 թվականի N 1111

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-4, ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Խերիբեգի Մկրտչյան դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4, թիվ 1 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.65քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4, թիվ 1 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4, թիվ 1/9-1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2020 թվականի N 1112

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵԴՐԱԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Սեդրակի Մելքումյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052020-06-0052 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Հյուսիսային փողոց թիվ 2/1-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 9.42քմ (5.56քմ+3.86քմ) ընդհանուր մակերեսով պարիսպը 32030 (երեսուներկու հազար երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 394.8քմ մակերեսով հողամասը 755650 (յոթ հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուսաննա Սեդրակի Մելքումյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուսաննա Մելքումյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2020 թվականի N 1113

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 59/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՌԱՆԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՉԵ ՀՈՎԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչե Հովիկի Վիրաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18052020-06-0035 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1453393 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 59/4 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 105.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18052020-06-0035 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 200970 (երկու հարյուր հազար ինը հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վաչե Հովիկի Վիրաբյանին՝ մառանի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վաչե Վիրաբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 105,0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1114

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱՄԻԼԱ ԱՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ, ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Սանդրոյի Գևորգյանի դիմումը՝ իր երեխային մանկատուն ուղարկելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 3-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 8, կետ 1), ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի թիվ 962-Ն և 2015թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշումներով, հաշվի առնելով, որ Գոհար Սանդրոյի Գևորգյանը միայնակ մայր է, անորոշ ժամկետով գտնվում է բուժհաստատությունում և նրա անչափահաս հաշմանդամ երեխան այլ խնամողներ չունի՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 7 շենքի 10 բնակարանի բնակիչ Գոհար Սանդրոյի Գևորգյանի (ծնված՝ 04.04.1975թ., անձնագիր՝ AS 0460393, տրված՝ 13.12.2018թ., 066-ի կողմից) անչափահաս երեխային՝ Կամիլա Արամ Գևորգյանին՝ (ծնված՝ 28.05.2011թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 135657, տրված՝ 01.06.2011թ., Վանաձորի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, վերցնել սկզբնական հաշվառման:

2. Անչափահաս Կամիլա Արամ Գևորգյանին ուղարկել մանկատուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1115

## ՄՈՒՇԵՂ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԴԱՂԲԱՇՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2020 թվականի մարտի 23-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

23 ապրիլի 2020 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է «Մուշեղ Արտավազդի Դաղբաշյանի վերաբերյալ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 963 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 23.03.2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Մուշեղ Դաղբաշյանը (հասցե՝ Տավուշի մարզ, Նոյեմբերյան, Բերդավան 27 փողոց, 1-ին նրբանցք, տուն 2) Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 12 հարավարևելյան մասում ինքնակամ կառուցել է շինություն:

2020 թվականի մարտի 23-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի ապրիլի 09-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Մուշեղ Դաղբաշյանը:

Մուշեղ Դաղբաշյանը վարչական մարմնին է ներկայացրել Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Կիրովականի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի թիվ 2142 օրդերի հսկողական կրկնակը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 03 հունիսի 2020 թվականին տրված զեկուցագրի համաձայն՝Վանաձոր համայնքի ավագանու 18.11.2014թ. թիվ 56-Ն որոշման, Վանաձոր համայնքի գլխավոր հատակագծի և ՀՀ հողային օրենսգրքի 19-րդ հոդվածի հողը գտնվում է բուհի զբաղեցրած տարածքում և հանդիսանում է հատուկ պահպանվող տարածքի հող և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝գիտակրթական կազմակերպությունների զբաղեցրած հողերը ենթակա չեն օտարման:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական,

մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ,**

1. Մուշեղ Արտավազդի Դաղբաշյանի ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Մուշեղ Արտավազդի Դաղբաշյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
3. Պարտավորեցնել Մուշեղ Արտավազդի Դաղբաշյանին մեկամսյա ժամկետում քանդել ինքնակամ կառուցված շինությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1116

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 56-1/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱԶԱՍՊ ՅՈՒՐԻԿԻ ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համազասպ Յուրիկի Միսկարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0027 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 56-1/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 20.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0027 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Համազասպ Յուրիկի Միսկարյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Համազասպ Միսկարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1117

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5-14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՀԵ ԺՈՐԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահե Ժորայի Գրիգորյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20032020-06-0027 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց թիվ 5-14/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 14.28քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 11.18քմ) ավտոտնակը 24280 (քսանչորս հազար երկու հարյուր ութսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 14.28քմ մակերեսով հողամասը 27340 (քսանյոթ հազար երեք հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վահե Ժորայի Գրիգորյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վահե Գրիգորյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1118

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30-8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՆՈՒՑՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Գուրգենի Մանուցյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0041 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ), դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց 30-8/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 15.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 15.41քմ) ավտոտնակը 41080 (քառասունմեկ հազար ութսուն) դրամով, 24.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.99քմ) մառանը 129480 (հարյուր քսանինը հազար չորս հարյուր ութսուն) դրամով և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 40.8քմ մակերեսով հողամասը 184580 (հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անդրանիկ Գուրգենի Մանուցյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Անդրանիկ Գուրգենի Մանուցյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1119

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 17-16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՖՐՈՒՆԶԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԽՈՒԴԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ֆրունզիկ Արմենակի Խուդինյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0040 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 17-16/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 29.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 27.17քմ) մետաղական ավտոտնակը 61110 (վաթսունմեկ հազար հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 29.1քմ մակերեսով հողամասը 85560 (ութսունհինգ հազար հինգ հարյուր վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ֆրունզիկ Արմենակի Խուդինյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ֆրունզիկ Խուդինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1120

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱՇԵՍ ՍԱՄՎԵԼԻ ՍՈՂՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտաշես Սամվելի Սողոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08012020-06-0022 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Նալբանդյան փողոց, թիվ 8 հասցեում գտնվող Արտաշես Սամվելի Սողոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1054հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1121

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 122-96/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՐԻԳՈՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Էդուարդի Հակոբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18052020-06-0002 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 122-96/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 26.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 25.11քմ) ավտոտնակը 67860 (վաթսունյոթ հազար ութ հարյուր վաթսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 26.1քմ մակերեսով հողամասը 118080 (հարյուր տասնութ հազար ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գրիգոր Էդուարդի Հակոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գրիգոր Հակոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1122

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գարիկ Աշոտի Գուրոկյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1103535 վկայականը, 23.05.2020թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 1676 (նոտարական ակտի կոդ: 763-20200521-2-4558780) պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորիչ փողոց թիվ 46ա հասցեում գտնվող տաղավարին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 46-1/1 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1123

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23-1/1 ԵՎ ԹԻՎ 23-1/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՍԵՆ ՅՈՒՐԻԿԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Յուրիկի Ղամբարյանի լիազորված անձ Գևորգ Արսենի Ղամբարյանի դիմումը, 24.01.2020թ. լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27092019-06-0082 և թիվ 27092019-06-0081 վկայականները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 23-1/1 և թիվ 23-1/2 հասցեներում գտնվող Արսեն Յուրիկի Ղամբարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.07754հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 259,87քմ ընդհանուր մակերեսով շինությունները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մ. Հերացու փողոց, թիվ 23-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1124

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) 4-ՐԴ ՓՈՂ. 2-ՐԴ ՆՐԲ ԹԻՎ 44 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԻԿ ԳԱՌՈՒՇԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբիկ Գառուշի Նավասարդյանի (ծնված՝ 15.10.1950թ.) դիմումը, 04.02.1997թ. տրված սեփականության վկայագիրը, 23.03.2020թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1288 (նոտարական ակտի կոդ: 763-20200323-84-4526335) վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 4-րդ փող. 2-րդ նրբ թիվ 44 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1164.40քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1950-1986թ.թ. և դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1164.40քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Ռուբիկ Գառուշի Նավասարդյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 4-րդ փող. 2-րդ նրբ թիվ 44 հասցեում գտնվող օրինական 1164.40քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Ժդանովի 4-րդ փող. 2-րդ նրբ թիվ 44 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 44/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1125

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ, ՔՇՀ-3 ԹԻՎ 31/11-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԹՈՒՐ ՅՈՒՐԻԿԻ ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Յուրիկի Խեչումյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052020-06-0025 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3 թիվ 31/11-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 33.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 30.04քմ) ավտոտնակը 57290 (հիսունյոթ հազար երկու հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 33.7քմ մակերեսով հողամասը 64510 (վաթսունչորս հազար հինգ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արթուր Յուրիկի Խեչումյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արթուր Խեչումյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1126

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 89-3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱԹԵՆԻԿ ԴԱՐՉՈՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սաթենիկ Դարչոյի Գալստյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04052020-06-0035 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Ձորյան փողոց թիվ 89-3/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 17.64քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 15.98քմ) ավտոտնակը 45870 (քառասունհինգ հազար ութ հարյուր յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 23.4քմ մակերեսով հողամասը 105870 (հարյուր հինգ հազար ութ հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սաթենիկ Դարչոյի Գալստյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սաթենիկ Գալստյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունիսի 2020 թվականի N 1127

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԻՉՈՒՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՅՈՒՏՈՆ ԱՌՈՒՇԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նյուտոն Առուշանի Գրիգորյանի (ծնված՝ 01.01.1937թ.) դիմումը, 23.09.1994թ. տրված սեփականության վկայագիրը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 14.05.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-71/ 20 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոցի թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 810.0քմ և կից 62.3քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1955-2009թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 872.3քմ (810.0+62.3), որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Նյուտոն Առուշանի Գրիգորյանին և Նաիրա Նյուտոնի Գրիգորյանին: Նյուտոն Առուշանի Գրիգորյանի բաժնեմասը կազմում է 436.15քմ (872.3:2, 810.0:2+62.3:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Նյուտոն Առուշանի Գրիգորյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոցի թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 810.0քմ մակերեսով հողամասին կից 62.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 872.3քմ (810.0+62.3), որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Նյուտոն Առուշանի Գրիգորյանին և Նաիրա Նյուտոնի Գրիգորյանին: Նյուտոն Առուշանի Գրիգորյանի բաժնեմասը կազմում է 436.15քմ (872.3:2, 810.0:2+62.3:2):
2. Ճանաչել Նյուտոն Առուշանի Գրիգորյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոցի թիվ 5 հասցեի 436.15քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 5.13քմ արտաքին մակերեսով աստիճաններից, 49.42քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկից, 17.55քմ արտաքին մակերեսով բնակելի տան ձեղնահարկից, 10.40քմ մակերեսով հարթակից, 10.16քմ արտաքին մակերեսով մառանից և 3.84քմ մակերեսով պարսպից:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Միչուրինի փողոց, թիվ 5-1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք.Վանաձոր

